ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄԸ

ՄԻ ՇԱՐՔ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

«Հանրաքվեի մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին», «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի երկրորդ ընթերցմամբ քննարկումը կազմակերպել՝

1) առաջին ընթերցմամբ ընդունվելուց հետո՝ 24 ժամվա ընթացքում.

2) առաջին ընթերցմամբ ընդունված օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ գրավոր առաջարկները ներկայացնելու համար սահմանել երեք ժամ.

3) օրենքների նախագծերի փաթեթը երկրորդ ընթերցումից առաջ գլխադասային հանձնաժողովում քննարկել գրավոր առաջարկները ներկայացնելու ժամկետը լրանալուց հետո՝ երեք ժամվա ընթացքում:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆ

2020 թվական, հունիսի 1
Երևան

ԱԺՈ - 343 - Լ